

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ 1920-30-ԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Պատմութեան ընթացքում հայոց լեզուն, ցաւօք, հարստացել է բառերով, որոնք բովանդակում են հայ ժողովրդի ճակատագրի էջերը: 1639ին, երբ Պատմական Հայաստանի մի մասն անցաւ Պարսկաստանի, իսկ մեծ մասը՝ Թուրքիայի տիրապետութեան տակ, այնուհետեւ մեր լեզուի մէջ են մտել «Արեւելեան Հայաստան» եւ «Արեւմտեան Հայաստան» հասկացութիւնները: 1915ից յետոյ, երբ հրաշքով փրկուածները սփռուեցին աշխարհով մէկ ու ստեղծեցին բազմաթիւ գաղթօջախներ, մեր բառապաշար մտաւ եւս մէկ բառ՝ «սփիւռք» կամ «ցրօնք»: Բայց, բուն հայրենիքը մնաց շատերի սրբաւորում, առաջացրեց հայրենակարօտութիւն, որ վերածուեց զանգուածային հայրենադարձութեան: Այսպէս, հայոց լեզուն հարստացաւ եւս մէկ բառով՝ «հայրենադարձութիւն»:

1921-1973ի ընթացքում Խորհրդային Հայաստան են հայրենադարձուել մօտ 200000 հայեր: Պատմագիտութիւնն առանձնացնում է զանգուածային հայրենադարձութեան երեք փուլեր.

- 1921-1938 - առաջին հայրենադարձութիւն (աւելի քան 60 000 մարդ)
- 1946-1948 - երկրորդ կամ մեծ հայրենադարձութիւն (մօտ 100 000 մարդ)
- 1962-1973 - երրորդ հայրենադարձութիւն (աւելի քան 26 000 մարդ):

1920ական թուականներին սկսուած եւ 1930ական թուականներին շարունակուած զանգուածային հայրենադարձութեան անմիջական արդիւնք են Նոր Արարկիր (1925), Նոր Բիւթանիա (1925), Նոր Եւդոկիա (1925), Նոր Մալաթիա (1927), Նոր Սեբաստիա (1928), Նոր Խարբերդ (1929), Նուբարաշէն (1930), Նոր Թումարզա (1931), Նոր Քղի (1931), Նոր Տիգրանակերտ (1934), Նոր Կեսարիա (1934), իսկ Համաշխարհային Բ պատերազմից յետոյ՝ նաեւ Նոր Զէյթուն, Կամարակ, Նոր Մարաշ, Նոր Կիլիկիա, Նոր Արէշ եւ այլ աւանների յատակադժման ու կառուցապատման աշխատանքները: Յետագայում այդ աւաններից մի քանիսը տարբեր պատճառներով

անուանափոխուել են, իսկ շատերը մինչեւ օրս էլ կրում են իրենց սկզբնական անունները: Որոշ աւաններ էլ պարզապէս աւելի մեծ աւանների թաղամասեր են դարձել:



Նկար 1. Նշում են այն բնակավայրերը, որոնց անուններով նոր աւաններ կառուցուեցին Հայքեմիում:

Ժամանակակից Երեւանի Գլխավոր յատակագիծն իրենից ներկայացնում է քաղաքի կենտրոնը (հիմնականում Ալ. Թամանյանի նախագծած 150 հազար բնակչի համար նախատեսուած քաղաքի սահմաններով), իրեն հարող կանոնաւոր յատակագծում ունեցող թաղամասերով, որոնք կազմաւորուել են մեծ մասամբ 1925 թուականից յետոյ: Երեւանի 1924ի յատակագիծը կազմուած էր՝ հաշուի առնելով քաղաքի ընդլայնման հնարաւորութիւնը: Միաժամանակ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ խնդիր էր դրուած նոր բնակավայրեր կառուել խորհրդային Հայաստան վերահաստատուել ցանկացող հայերի համար: Այսպէս են առաջացել հայրենադարձների բոլոր նոր աւանները, որոնց մի մասը յետագայում ընդգրկուել է Երեւանի կազմի մէջ՝ քաղաքաշինական եւ ճարտարապետական որոշակի ազդեցութիւն թողնելով քաղաքի վրայ:

Իւրաքանչիւր թաղամաս բնորոշուում էր միջավայրային առանձնայատկութիւններով: Դրանք դրսեւորուում էին ոչ միայն «Ներկից» իրենց հետ բերած ինքնատիպ կենցաղավարութեան մէջ, այլեւ իրենց կառուցած տների ճարտարապետութեան, տարածական կազմակերպման, յատակագծային եւ ճակատային լուծումների մէջ, յատկապէս՝ ներքնատեսքերում ու մանրամասներում: Յատուկ ուշադրութեան են արժանի հայրենադարձների տներին բնորոշ շի-


նարարական տեխնիկան ու հնարքները: Քանի որ առաջին զանգուածային հայրենադարձութիւնը համընկնում է Հայաստանի արդի ճարտարապետութեան հիմնարար փուլի հետ, ապա անսխալ է, որ այս շրջանի բնակելի թաղամասերի ճարտարապետութեան կազմաւորման վրայ անմիջական ազդեցութիւն են ունեցել հայրենադարձների բերած բնակելի տների ճարտարապետութիւնը: Այդ ինքնատիպ ճարտարապետական միջավայր ունեցող թաղամասերի գոյութեամբ երեւանը 50-60ական թուականներին կարծես դարձել էր Պատմական Հայաստանի իւրայատուկ մանրակերտը:

Քննարկուող գործընթացը կարեւորւում է նրանով, որ յատկապէս առաջին հայրենադարձութիւնը (1920-1930) առիթ եւ խթան հանդիսացաւ համապարփակ կառուցապատում ունեցող աւանային շինարարութեան սկզբնաւորման համար: Այս աւանների նախագրծման եւ կառուցապատման տարիներին ձեւաւորուեցին եւ աստիճանաբար մշակուեցին աւանաշինութեան հիմնական քաղաքաշինական գրոյթները Խորհրդային Հայաստանում:

Հայրենադարձների թաղամասերն ու առանձին աւանները ընդունում էին հետեւեալ քաղաքաշինական ընդհանրութիւններով.


- ունէին մէկ հիմնական կառուցապատող. (ՀՕԿ-ը՝ Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ, Նոր Քղի աւանների համար, ՀԲԸՄ՝ Նուբարաշէնի համար, Ամերիկայի Արաքիթրցիների Հայրենակցական Միութիւնը՝ Նոր Արաքիթրի համար, Ամերիկայի Համախարբերողցիական Միութիւնը՝ Նոր Խարբերդի համար եւ այլն);
- ժողովրդագրական առումով քաղաքակ միատարր էին, բնակեցուած միեւնոյն բաղաժից եւ շրջակայ գիւղերից հայրենադարձուած հայերով.
- իրենցից ներկայացնում էին գրեթէ միատարր բնակելի շրջան.
- յարակից շրջանների համար հանդիսանում էին մասնակի սպասարկման վայր.
- բննարկուող աւանները նախագծուել, հիմնադրուել եւ կառուցապատուել են նոր, նպատակային տրամադրուած հողամասերում.
- տարածքները ունեն ոչ մեծ չափեր.
- գլխաւոր յատկագծերը մշակուել էին կոմպլեքսային կառուցապատման սկզբունքով: Ունեցել են կանոնաւոր գլխաւոր յատկագծեր, որոնք ըստ յատկագծային լուծումների տարբերակում էին՝

- Ուղղանկյուն նախագծով (Նոր Մալաթիա, Նոր Սերաստիա եւ այլն)։



Նկար 2. Նոր Մալաթիա եւ Նոր Սերաստիա աւանների գլխաւոր յատակագծերը։

- Հառազայթաօղակային նախագծով (Նոր Արաբկիր, Նուրարաշէն)։




Նկար 3. Նոր Արաբկիր եւ Նուրարաշէն աւանների գլխաւոր յատակագծերը։

- առկայ էր բնակչութեան ոչ մեծ խտութիւն։
- բնորոշ էին հիմնականում մէկ, ոչ մեծ կենտրոնով, պարզ բարեկարգումով։
- արտադրական ձեռնարկութեան հետ ապահովուած էր անմիջական կապ։
- բնորոշ էին սակաւայարկ կառուցապատմամբ։

Աւանները տեղադրութեամբ տարբերուում են երկու հիմնական սկզբունքներով:

- ինքնուրոյն եւ հեռու բաղաձիգ (Նոր Խարբերդ, Նուբարաշէն).
- բաղաձիգ մօտ կամ արուարձանում (Նոր Արաքկիր, Նոր Մալաթիա, Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ եւ այլն), որոնք աստիճանաբար ձուլուել են բաղաձիգ եւ դարձել մայրաքաղաքի թաղամասեր:



Նկար 4. Նոր աւանների տեղադիրքը Նրեւանի նկատմամբ:

Մայրուղիների նկատմամբ աւանների տեղադրութեան սկզբունքները տարբերուում են:

- մայրուղին անցնում է աւանից դուրս (Նոր Արաքկիր, Նուբարաշէն, Նոր Տիգրանակերտ).
- մայրուղին անցնում է աւանի մօտով (Նոր Քղի, Նոր Կեսարիա, Նոր Խարբերդ).
- մայրուղին անցնում է աւանի միջով (Նոր Մալաթիա, Նոր Սերաստիա):

Փողոցների լայնական կտրուածքների մշակման համար որոշիչ գործօններ էին:

- աւաններում գերակշռող հետիոտն երթելակութիւնը.
- աւանային սակաւաշարի կառուցապատման սկզբունքները.
- փողոցի եւ կառուցապատման միջեւ համաչափութիւն ապահովելու անհրաժեշտութիւնը:

Քննարկուող աւանների նախագծման եւ կառուցապատման փորձը ցոյց է տալիս, որ աւանային փողոցների

- օպտիմալ լայնութիւնը կարմիր գծերի միջեւ տատանուում է 12-18մ.
- կառուցապատման գծերի միջեւ լայնութիւնը՝ 25-50մ (կախուած աւանի մեծութիւնից).
- քեֆութիւնը տրուում էր 2%-3% (անձրեւաջրերի քնական հեռացման համար):

Աւանային փողոցների համակարգում կանաչապատումը հանդիսանում է ոչ միայն բարեկարգման կարեւոր տարր, այլեւ հիմնական առողջարարական գործօն: Յատկապէս դա ակնյայտ է թամանեանի կողմից նախագծուած Նոր Արաբկիր եւ Նուբարաշէն աւաններում, ուր տեղ ունեն ընդարձակ պուրակներ, կանաչ գոտիներ, ինչպէս նաեւ՝ լայն ծառուղիներ:

Աւանների կենտրոնների դիրքը հիմնականում ընտրւում էր երկու տարբերակով:

- գլխաւոր փողոցի վրայ (Նոր Խարբերդ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա).
- հիմնական փողոցների հատման տեղում (Նոր Արաբկիր, Նուբարաշէն):

Աւանի կենտրոնները կազմակերպւում էին.


- հասարակական շէնքերով (դպրոցներ, մանկապարտէզներ, մանկամտօրներ, քատրոններ, ակումբներ, գրադարաններ);
- արտադրական շէնքերով (մանածագործական, գորգագործական, հիւսուածեղէնի արտադրութեան ընկերութիւններ ու գործարաններ):

Աւանների բնակելի թաղամասերը կառուցապատւում էին սակաւայարկ, կոմունալ յարմարութիւններից զուրկ


- բազմաբնակարան տներով:



Նկար 5. Բաքանն եւ Վեր Խոխ գիւղի շէնքերը




Նկար 6. Բազմաբնակարան տուն Նոր Խարբերդում
(հեղինակ՝ Ա.Փրիկեան):




Նկար 7. Բազմաբնակարան տուն Նուբարաշենում
(հեղինակ՝ Միհրան Մերջանեանց-Միրոն Մերժանով):

■ կցաշար երկրբնակարան տներով.



Նկար 8. կցաշար երկրբնակարան տուն Նոր Արաբկիրում
(հեղինակ՝ Արմեն Խաչատրեան):

■ մենատներով:




Նկար 7. Մենատան նախագիծ Նոր Կեսարիա աւանի համար
(հեղինակ՝ Մանուել Կապուտիկեան):

Հայրենադարձուած լինելով միեւնոյն վայրից, պահպանելով «Երկրի» աւանդոյթները, վերոյիշեալ աւաններում (Թաղամասերում) հայրենադարձները ստեղծել եւ պահպանում էին համապատասխան միջավայր եւ որոշ ժամանակահատուածում այդ աւանները դարձել էին Պատմական Հայաստանի բնակավայրերի ինքնատիպ միջավայրի կրողները:

Բնակելի տների մէջ առանձնանում են այնպիսիք (առաւել ցայտուն օրինակ են Նոր Արարկիրում պահպանուած տները), որոնց մէջ արտացոլում են գտել «Երկրի» բնակելի տան ճարտարապետական սկզբունքները եւ ձեւերը: Դրանք արտայայտում են.

- յատկացուած հողամասում բնակելի տան տեղադրութեամբ.
- յատկացածային լուծումներում (գործածական համակարգ, փողոցը րակի հետ միացնող միջանցք, երկյարկանի խոհանոց, եւ այլն).




Նկար 8. Մամիկոնեանց նրբ. քիւ 3 տան յատկագիծը եւ նակատը:

- գլխավոր նակատների մշակման միջ (եռամաս լուսամուտներ);
- ծալատարածական յօրինումում («ջիւմաների» րազմագան կիրառում);



Նկար 9. «Չիւմաների» կիրառման օրինակ Մամիկոնեանց նրբանցում:

- ներքնատեսում (որմնախորշերի, «իւլիքների», «տոլարների», «սնդիրների», «կաննփաների» կիրառում).




Նկար 10. «Տոլար» եւ «կաննփա» ճաննիկեանների տանը:

- մանրամասներում (լուսամուտների ձևեր, նաղեր, փայտե տարրեր, «գարաններ»).



Նկար 11. Լուսամուտի և դռան մանրամասներ:

▪ շինարարական տեխնիկայում՝ (պատերի շարում, կտուրների կառուցում, հակաերկրաշարժային «արաղաներ»ի կիրառում):



Նկար 12. Կտուրների տոբաման համար կիրառուող «լող»
և աստինանավանդակները ծածկող դռներով

Ընդհանուր դժերով, այսպէս են բնութագրւում հայրենադարձների թաղամասերի ճարտարապետութիւնը՝ արտայայտելով իրենց ինքնատիպութիւնն ու հաւատարմութիւնը «Երկրի» ժողովրդական կառուցողական աւանդոյթներին:

Յետագայում որդեգրուած քաղաքաշինական քաղաքականութեան հետեւանքով յիշեալ թաղամասերն հետզհետէ շարունակում են կորցնել իրենց ինքնատիպ դէմքն ու միջավայրը: Այդ պատճառով հայրենադարձների աւանների եւ թաղամասերի թէ՛ քաղաքաշինութեան, թէ՛ բնակելի ու հասարակական տների ճարտարապետութեան, թէ՛ շինարարական տեխնիկայի, նաեւ՝ Պատմական Հայրենիքից ներմուծուած ճարտարապետական իւրայատկութիւնների դրսեւորումների մասնագիտական հետազոտումն ու վերլուծութիւնը խիստ արդիական է: «Գենետիկ» յիշողութեամբ Մայր հայրենիքի հողում կառուցուած յատկապէս ժողովրդական բնակելի տների ճարտարապետութիւնը մէկ անգամ եւս փաստում է Արեւմտեան Հայաստանում թողած մշակութային ժառանգութեան կրողներին եւ ժողովրդին:

ԷՄՄԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Summary

SPECIFIC ARCHITECTURAL CHARACTERISTICS OF
REPATRIATE DISTRICTS

EMMA HARUTYUNYAN

The master plan for the modern city of Yerevan consists of the centre (mainly within the borders of the city of 150,000 designed by A. Tamanyan) and the districts regularly laid out surrounding it that were mostly formed after 1925. The 1924 plan for Yerevan was designed with the expansion of the city in mind. At the same time, after the Sovietisation of Armenia, the goal of constructing new settlements for those Armenians wishing to relocate to Soviet Armenia was put in place. All the new districts meant for repatriates thus came about, some of which were later incorporated into Yerevan, leaving their own construction and architectural influence on the city. Given such an architectural environment with those original and unique districts, the Yerevan of the 1950s-1960s seemed as if it was a special scale model of Historical Armenia.

Between 1921 and 1973, some 200,000 Armenians moved to Soviet Armenia. There were three historical periods of mass repatriation: the first repatriation of 1921-1938 (with over 60,000 individuals), the second or great repatriation of 1946-1948 (around 100,000), and the third repatriation of 1962-1973 (more than 26,000).

The mass repatriations that began in the 1920s and continued into the 1930s had as an immediate result the planning and construction of the districts of Nor Arabkir (1925), Nor Byutania (1925), Nor Yevdokia (1925), Nor Malatia (1927), Nubarashen (1930), Nor Tamarza (1931), Nor Keghi (1931), Nor Tigranakert (1934), Nor Kesaria (1934), and, after the war, also Nor Zeytun, Kamarak, Nor Marash, Nor Kilikia, Nor Aresh, and others. Some of those districts later had their names changed for some reason or other, but many still have their original names until today. And some districts have simply become neighbourhoods within larger districts (for example, Nor Sebastia includes Nor Keghi, Nor Tigranakert, and Nor Kesaria within its territory). Most of the districts were later incorporated within the boundaries of Yerevan, turning into sections of Yerevan (Nor Malatia, Nor Arabkir, etc.).

Having immigrated from the same place, keeping the ways of “the old country”, the repatriates created and maintained a certain atmosphere in the aforementioned districts. For some time, those districts bore a unique environment of the cities of Historical Armenia. Residential homes stood out in ways that reflected the architectural principles and forms of the houses in “the old country”(the best examples come from buildings preserved in Nor Arabkir).

As a result of the urban planning policies that were later adopted, these districts gradually lost their original characters and environments. For this reason the specialised research and analysis of both the construction planning, the architectural styles of residential and public buildings, the construction tools, and the examples of specific architectural characteristics brought in from the historical homeland as represented within the districts and neighbourhoods of the repatriates is a very pressing issue. The traditional architecture of homes in particular – constructed with “genetic memory” in the homeland – is yet another testimony to the people and the cultural heritage they bear left behind in Western Armenia.